

Հայեցի վերտառութիւն երկաթագիր և յանդիման նորին
'ի միւս փեղկին արաբացի, որք ունին օրինակ զայս:

Ի ԹՈՒԻՍ ՀԱՅՈՑ Ո. Հ Խ. Զ. (676) = (1227) ԿԱԶՄԵՅԱԻ
ԴՈՒՌՍ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՍ ԶԵՌԱՄԲ ՏԷՐ ԱՐԲԱՀԱՄՈՒ
ԵՒ ՏԷՐ ԱՌԱՔԵԼՈՅ: Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՀԵԹՄՈՅ
ՈՐԴԻՈՅ ԿՈՍԱՆԴՆԵՒԻ. ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԵՍՅԻ
ԱՇԽԱՏԱՒՈՐԱՅ ⁽¹⁾:

كل هذا الباب بعون الله تعالى في أيام مولانا السلطان الملك المعظم
في تاريخ الهجرة سنة اربعة وعشرين وستمائة

Իսկ Մէլիք Քեամիլ իշխանն Եդիպտոսի՝ ցրտացեալ 'ի
սիրոյ ազգականաց իւրոց, որք իշխէին 'ի Գամասկոս եւ
յայլ տեղիս, ազգ արար թագաւորին Սիկիլիոյ, այն է
Ֆրէտէրիկոս Բ. Կայսրն, բանադրեալ 'ի Գրիգոր Թ. Պա-
պէն Հռոմայ, փութալ գալ 'ի Պաղովմայիս, խոստացեալ
տալ նմա զերուսաղէմ. և նորա անցեալ 'ի գլուխ վեցեր-
որորդ Սաչակրաց՝ դայ հասանէ անդ: Մէլիք Մուաղլամ՝
լուեալ զգալուստ նորին՝ մեռաւ 'ի Գամասկոս, և կալաւ
գիշխանութիւնն որդի նորին Մէլիք Նասր: Եւ յետ տար-
ւոյ միոյ խնդրեաց 'ի նմանէ Քեամիլ զամրոցն Շովպէքայ.
և 'ի չառնել նմա պատասխանի բանից նորա, եմուտ Քեա-
միլ յերկիր իշխանութեան նորին, և եդ վերակացուս յե-
րուսաղէմ և յայլ քաղաքս (1229): Իսկ Կայսրն տիրեաց
Սիգոնի, որ կոսարաթին էր 'ի մէջ այլազգեաց և քրիստո-
նէից. և ետ կանգնել զաւերեալ պարիսպս նորին, և ար-

(1) Զի Էթէ 'ի վերջն դարս նենդութիւնն Յունաց չէր ծածկեալ
եւ Էդժեալ զայլ արձանագրութիւնս Մենդեան Եկեղեցւոյն, ակներեւ
տեսանէր արդեօք դորձ Հեթմոյ արքային, քանզի 'ի հեռանալ Սաչակը-
րոց, Ս. Տեղիքն մնացին 'ի ձեռս Հոյ կրօնաւորաց, զի Էթէ դուռնս
նկարահերտ միայն շինեցաւ յայնժամ, այլ նաեւ ընդ նմա բովանդակ փոյ-
տակերտ առաստաղ տաճարիս՝ ծախիւք Հեթմոյ արքային Հայոց. զորոյ
ատաղձս ետ տաշել և կերակել 'ի Տարսն քաղաքի. թող զազգային աւան-
դութիւնս, ձեւ գերանաց և կերտաց ատաղձից ինքնին ազազակնն լինիլ
գործ ճարտարաց Տարսս լերանց, որք են անփուտ փայտ, աշխուհ ի
կռէցեալ 'ի Տաճկաց: